

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴԵՐԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԿԱԺՈՅԱՆ Հ. Ա.

Համայնքային զարգացման ուսումնասիրությունն իրականացվում է մի շարք գիտական առարկաների՝ սոցիոլոգիայի, տնտես- սագիտության, քաղաքագիտության, կառավարման և պլանավորման ու նույնիսկ ճարտարապետության շրջանակներում: Հաճախ այդ ուսումնասիրություններն իրականացվում են հավաքական կամ տրանսդիսցիպլինար մոտեցմամբ, որն իր բազմաթիվ առավելությունների հետ նաև հետազոտական որոշակի խնդիրներ է ներառում: Դա պահանջում է «ընդհանուր լեզվի» վերլուծական հայեցակարգային համակարգի մշակում, ինչպես նաև խնդիրների և մոտեցումների համաձայնեցված հայեցակարգ՝ Համայնքային զարգացման ժամանակակից հետազոտություններն ավելի հաճախ պայմանավորված են գործնական խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, քան տեսության զարգացման նկատառումներով: Փորձագետների և մասնագետների օրակարգային առանցքային հարցերից է նաև, թե ինչպես պետք է ընկալել համայնքային զարգացումը՝ որպես գործընթաց, թե՛ արդյունք:

**1. Համայնք:** Համայնքը սոցիալական գիտությունների կենտրոնական հասկացություններից է, սակայն դրա հստակ սահմանումը բարդ խնդիր է<sup>2</sup>. ըստ որոշ գիտնականների էլ՝ անգամ անհնար<sup>3</sup>, իսկ Ջ. Հիլերին, օրինակ, ավելի քան կես դար առաջ, վերլուծելով առկա գրականությունը, գտել է համայնքի 94 տարբեր սահմանում<sup>4</sup>: Հետևելով Ք. Վիլկինսոնին<sup>5</sup>՝ համայնքը սահմանել ենք ըստ նրա երեք հիմնատարրերի. 1) տարածք, 2) ընդհանուր շահերի հետապնդման հարցերի շուրջ սոցիալական փոխգործակցություն, 3) սոցիալական բնույթի կազմակերպություններ կամ հաստատություններ, որոնք ապահովում են բնակիչների այդ փոխներգործությունը:

<sup>1</sup> Green, G. P. and Haines A. *Asset Building & Community Development* (3-rd edition), London, 2012.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 2:

<sup>3</sup> Robinson J. W. and Green G. P. *Introduction to Community Development: Theory, Practice, and Service-Learning*. London, 2011.

<sup>4</sup> Hillery G. *Definitions of Community: Areas of Agreement* (*Rural Sociology*, 1955, N 20, p. 111-123).

<sup>5</sup> Wilkinson, K. P. *The Future of the Community in Rural America* in K. E. Pigg (ed.) *The Future of Rural America: Precursors to Policy*. Boulder, 1991, p. 73-89.

**2. Համայնքային կազմակերպություններ:** Շահույթ չհետապնդող այն կազմակերպություններն են, որոնք ներկայացնում են համայնքը և տեղական մակարդակով սոցիալական ծառայություններ են մատուցում: Լավ իմանալով առկա հիմնախնդիրները՝ այդ խնդիրների լուծմամբ շահագրգռված համայնքային կազմակերպությունները ծառայում են իրենց համայնքի մարդկային, կրթական, շրջակա միջավայրի պահպանման, հանրային անվտանգության և այլ կարիքների բավարարմանը: Այդ կազմակերպությունների գործունեության զգալի մասը հիմնված է աշխատանքի, նյութական և այլ միջոցների կամավոր ներդրումների վրա:

Այսպիսով, համայնքային կազմակերպությունները (անզվերեն՝ **community-based organisations**).

- շահույթ չեն հետապնդում,

- գործում են տեղական մակարդակով,

- ծառայություններ են մատուցում՝ գործունեությունն իրականացնելով կամավոր ներդրումների հիման վրա:

Տեղական այլ կառույցների թվում, որպես համայնքի երրորդ հիմնատարը, համայնքային կազմակերպությունները կարևոր դեր ունեն համայնքային զարգացման գործընթացում: Հայաստանի տարբեր մարզերում համայնքային զարգացման մեջ ներգրավված այդ կազմակերպությունները նման են և, միևնույն ժամանակ, էապես տարբերվում են իրենց շահառուների՝ համայնքից դուրս ստեղծված այլ հասարակական կառույցներից: Համայնքային կազմակերպություններում ավելի շատ է կամավորների մասնակցությունը: Դրանց անդամները սովորաբար նույն հետաքրքրություններն ունեցող ընկերներ կամ հարևաններ են:

Համայնքային կազմակերպությունների գործառնությունները բազմազան են: Նրանք զբաղվում են առողջապահական խնդիրներով, ընդհանուր ռեսուրսների ներգրավմամբ և կառավարմամբ. օրինակ՝ ջրի համատեղ օգտագործման, համայնքի անդամների շահերի պաշտպանության հարցերով համագործակցում են տեղական իշխանությունների հետ: Այսօր ակնհայտ է նաև նրանց ներդրումը պետական ռազմավարական ծրագրերում: Այսպես, հյուսիսային համայնքներից մեկում աղքատության հաղթահարման պետական ծրագրի շրջանակում իրականացվող առողջապահության հարցերով միջոցառումների հաջողությանն է նպաստել համայնքային կազմակերպության կողմից պարբերաբար նախաձեռնվող դրամահավաքը՝ կարիքավոր խմբերի համար դեղամիջոցների ձեռքբերման համար, և կամավոր բուժքույրերի ուսուցման ծրագրերը: Դրանք նպաստում են համայնքի առողջապահական խնդիրների արագ լուծմանը:

Որոշ համայնքային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում է գործազրկության խնդիրը: Կան նաև տեղական որոշումների կայացման գործընթացում կանանց ներգրավման հարցով զբաղվող կազմակերպություններ: Այսպես, այդ ծրագրերից մեկը տնտեսական և իրավական գիտելիքների և արտասահմանյան փորձի փոխանակման միջոցով նպաստեց համայնքում

ջրային ռեսուրսների կառավարման գործընթացում կանանց մասնակցությամբ:

Համայնքային կազմակերպությունները իրականացնում են նաև շրջակա միջավայրի պահպանման ծրագրեր: Գեղարքունիքի քաղաքներից մեկում համայնքահեն կազմակերպության նախաձեռնությամբ համայնքի անդամները երկու օրում լուծեցին քաղաքապետարանին տարիներ շարունակ անլուծելի թվացող աղբահավաքի խնդիրը և տեղական իշխանությունների հետ մշակեցին աղբահանման մունիցիպալ ծրագիրը<sup>6</sup>:

Ի տարբերություն այլ հասարակական կազմակերպությունների՝ տեղական խնդիրների լուծման շուրջ առաջացած համայնքային կազմակերպություններում կառուցվածքներն ու գործառույթները՝ խորհուրդը, ռազմավարությունը, ավելի թույլ են զարգացած. վերջիններս ավելի քիչ են համագործակցում այլ կազմակերպությունների հետ և այդ իսկ պատճառով ավելի դժվար են հասնում ֆինանսական կայունության. զանգվածային հաղորդամիջոցներն ավելի քիչ են լուսաբանում նրանց գործունեությունը, և նրանց դերը բազմիցս թերագնահատված է:

Համայնքային կազմակերպությունների գործունեությունը մեծ նշանակություն ունի համայնքային զարգացման գործընթացում: Համագործակցության ուսուցման և գիտելիքների կառավարման հմտությունների զարգացման միջոցով նրանք կարող են գործնական կապեր ստեղծել տեղական իշխանությունների հետ, իսկ փորձի փոխանակման միջոցով կարելի է խթանել համայնքային զարգացման գործընթացը:

Ինչպես նշվեց, համայնքային զարգացումն ապահովում և ուղղորդում են այն սոցիալական հաստատությունները, որոնք համայնքի անդամներին հաղորդակցելու հնարավորություն են ընձեռում: Ուստի և Հայաստանում համայնքային կազմակերպությունների ստեղծումը համայնքային զարգացման կարևոր գործոններից է, իսկ առկայությունն ու զարգացումն այդ գործընթացի ցուցանիշն են:

Համայնքային կազմակերպությունները կարևոր դեր ունեն նաև սոցիալական ծառայությունների մատուցման, տեղական ռեսուրսների համախմբման և զարգացման հնարավորությունների ընդլայնման գործում: Ի տարբերություն ոչ տեղական հասարակական կազմակերպությունների՝ դրանք ստեղծում և կառավարում են համայնքի անդամները: Այդ կազմակերպություններն ունեն կապեր, արմատավորված են համայնքում և իրազեկ են համայնքի խնդիրներին: Համայնքային կառույցները գոյանում են այն ժամանակ, երբ համայնքի զարգացման գործընթացում ձևավորվող սոցիալական նոր հարաբերությունները ստեղծում են ինստիտուցիոնալիզացիայի՝ համակարգային փոփոխության կարիք: Այդ կառույցները, դառնալով համայնքային զարգացման ուսուցման կենտրոններ, կարող են ունենալ նաև որոշակի մասնագիտական գործառույթներ:

<sup>6</sup> Տե՛ս Գաժոյան Հ. Ա., Համայնքային զարգացումը քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացում, Ե., 2009:

**3. Համայնքային կազմակերպությունների ուսումնասիրությունը:** Հաստատում համայնքային կազմակերպությունները դեռ բավականաչափ ուսումնասիրված չեն, հատկապես մարզերում, որտեղ քաղաքացիական հասարակության ձևավորման մասին գրականության պակասը, գումարվելով ֆինանսական միջոցների սակավությանը, դժվարացնում է քաղաքացիական հասարակության այդ կառույցների ձևավորումը: Երկրում համայնքների զարգացման գործընթացի և մասնավորապես համայնքային կազմակերպությունների ձևավորման արդիականության ու գիտական մշակվածության զարգացման անհրաժեշտությունից ելնելով՝ կարելի է որպես գիտական հիմնահարց ձևակերպել համայնքային զարգացման գործընթացում համայնքային կազմակերպությունների ձևավորման հարցը՝ այդ գործընթացին մասնակցելու քաղաքացիների ցածր պատրաստվածության և ռեսուրսների սակավության պայմաններում: Եվ եթե ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրներում համայնքային զարգացման գործընթացներում կարևորվում են ներքին գործոնները՝ ինքնակազմակերպումը, քաղաքացիների անձնական հետաքրքրությունը, կամավորականությունը, ապա Հայաստանում քաղաքացիական հասարակության ինստիտուտները մեծ մասամբ ձևավորվում են օտարերկրյա ֆինանսավորմամբ և պետության ինքնասահմանափակման միջոցով. ընդ որում, նվազ իրազեկության և ֆինանսական ու այլ ռեսուրսների սակավության պատճառով այդ գործընթացը մարզերում շատ ավելի դանդաղ և դժվար է իրականանում, քան մայրաքաղաքում:

Ժողովրդավարական ավանդույթներ ունեցող և ժողովրդավարության ուղին բռնած նոր երկրների փորձը, տեսական և էմպիրիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համայնքների ձևավորման և այդ գործընթացում համայնքահեն կազմակերպությունների զարգացման որոշիչ ներքին գործոններն են կազմակերպության դերը, հանրակարգային զարգացումը և քաղաքացիական մշակույթը, ինչպես նաև արտաքին իրավական և դիրքային գործոնները, որոնք հավանաբար պայմանավորում են նաև համայնքային զարգացումը Հայաստանում: Փորձը ցույց է տալիս, որ խթանելով ներքին գործոնները և արտաքին գործոնների շնորհիվ համապատասխան պայմաններ ստեղծելով, կարելի է հզորացնել համայնքային զարգացման գործընթացը:

Համայնքային զարգացման ներքին գործոններից են համայնքային կազմակերպությունների դերը՝ ստեղծման կարիքը, գործունեության տեղական պահանջարկը՝ ինդիքները, շահառուները, կամավորները, և տնօրինվող ռեսուրսները՝ ֆինանսական միջոցները, գիտելիքները, մասնագետները: Համայնքային կազմակերպությունները կարող են հիմնադրվել համայնքի համախմբման փուլում, սակայն նրանց ձևավորվումը համայնքի հանրակարգային զարգացման արդյունքն է: Հանրակարգային զարգացման չափանիշը, իր հերթին, այդ կազմակերպությունների գործունեության որակն է, որը որոշվում է գործառույթների իրականացման արդյունավետությամբ:

Համայնքային կազմակերպությունների գործառույթային բնագավառներից կարևորվում են դեկավարման համակարգերը, մարդկային ռեսուրսների, ֆինանսական միջոցների կառավարումը, ծառայությունների մատուցումը և

արտաքին հարաբերությունները: Հանրակարգային զարգացման գործոնի հավաքական բնույթի առավելությունն այն է, որ այն գնահատելիս կարելի է պատկերացում կազմել նաև այլ գործոնների մասին: Հանրակարգային զարգացման պլանավորման և ընթացիկ գնահատման համար կարելի է օգտագործել հանրակարգային զարգացման գնահատման գործիքը<sup>7</sup>, CARD-ը<sup>8</sup>, այլ մեթոդներ:

Համայնքների զարգացման հիմքում քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացն է, որի նպատակը սոցիալական փոփոխությունն է, իսկ սոցիալական փոփոխության սուբյեկտի քաղաքացիական բնութագրի համար կարևոր նշանակություն ունեն քաղաքացիական և քաղաքական մշակույթի հասկացությունները: Քաղաքացիական մասնակցային մշակույթը ներառում է քաղաքական մշակույթը՝ քաղաքական գիտելիքների, կամքի, հայացքների ու համոզմունքների վերարտադրվող համակարգը, ինչպես նաև քաղաքական կամքը և սոցիալ-քաղաքական հետաքրքրությունների հաղորդակցման կարողությունը: Համայնքային զարգացման մշակույթի գործոնը պայմանավորում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների համակարգի գործունեությունը, փոխհարաբերությունները և առանձնահատկությունները: Տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքական ոլորտում՝ կուսակցությունները, սոցիոմշակութային դաշտում՝ «երրորդ սեկտորի» այլ կազմակերպությունները, տեղեկատվության ոլորտում՝ տեղական ՁԼՄ-ները, իսկ տնտեսականում փոքր և միջին բիզնեսն ազդում են համայնքահեն կազմակերպությունների ձևավորման վրա:

Ի տարբերություն ներքին գործոնների՝ գործընթացի արտաքին գործոնները, համայնքային կազմակերպությունների կայացման և զարգացման համար պայմաններ ստեղծելով հանդերձ, անուղղակիորեն ազդում են նրանց ձևավորման գործընթացի վրա, սակայն չեն բնութագրում այն: Այսպես, իրավական գործոնը ներառում է պետության սահմանած համընդհանուր վարքի կանոնները՝ այն նորմերը, որոնք քաղաքացիներին և նրանց միություններին հնարավորություն են տալիս իրականացնելու իրենց նպատակները, և այն ինստիտուտները, որ ապահովում են այդ կանոնների և նորմերի իրականացումը: Գործոնի չափանիշն է օրենսդրական դաշտի և ինստիտուտների զարգացածությունը, իսկ ցուցանիշը քաղաքացիների կարիքները, արժեքներն ու նպատակներն են, ինչպես նաև այն, թե որքանով է հնարավոր այդ նպատակներն իրականացնել տվյալ օրենսդրական դաշտի շրջանակում:

Դիրքային գործոնն է պետական և տեղական կառավարման մարմինների դիրքը քաղաքացիական հասարակության և մասնավորապես համայնքային զարգացման հարցում: Պետությունը կարող է օժանդակել, լինել չեզոք և

<sup>7</sup> World Learning (1995) Institutional Assessment Instrument. Washington: PIDT, World Learning for International Development, [http://pdf.usaid.gov/pdf\\_docs/PNACB274.pdf](http://pdf.usaid.gov/pdf_docs/PNACB274.pdf)

<sup>8</sup> Peace Corps (2003) NGO Training Guide for Peace Corps Volunteers, Washington: Peace Corps, [http://multimedia.peacecorps.gov/multimedia/pdf/library/M0070\\_all.pdf](http://multimedia.peacecorps.gov/multimedia/pdf/library/M0070_all.pdf)

հակազդել համայնքային զարգացման գործընթացներին: Այս գործոնն ունի կազմակերպական և սուբյեկտիվ չափանիշներ: Առաջինն արտացոլում է համայնքների և համայնքային կազմակերպությունների հետ վարչական կառույցների համագործակցության ուղղվածությունը, որի ցուցանիշներն են կառավարման ժողովրդավարությունը, պատասխանատվությունը և քաղաքացիների ու հասարակական կազմակերպությունների հանդեպ վստահությունը, տեղական մակարդակով որոշումների կայացման մասնակցության մշակույթի առկայությունը, բնակչության հետ հետադարձ կապի արդյունավետությունը, իշխանության ապակենտրոնացման պատրաստությունը: Այս գործոնն արտացոլում է նաև տեղական իշխանության պատրաստականությունը համագործակցելու համայնքային կազմակերպությունների հետ:

Այս մեթոդաբանությամբ՝ հարցումների և փաստագրական ու այլ տեղեկությունների ուսումնասիրության հիման վրա, Շիրակի մարզում հեղինակն իրականացրել է համայնքային կազմակերպությունների ուսումնասիրություն, որի հիմնական արդյունքները և դրանցից հետևող առաջարկությունները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

1. Բնավ չթերագնահատելով արտասահմանյան ֆինանսավորման գործոնը՝ ակնհայտ է, որ համայնքային կազմակերպությունների ստեղծման դրդապատճառ են նախ և առաջ համայնքի ներքին կարիքները:

2. Կազմակերպությունների դերի չափանիշներից են նաև իրենց գործունեության տեղական պահանջարկը և տնօրինվող համայնքային ռեսուրսները՝ ֆինանսական միջոցները, գիտելիքները, մասնագետները: Ֆինանսական նվազ միջոցների վերաբերյալ քննարկման մասնակիցները նշում էին այն փաստը, որ վերջերս Գյումրիում տեղակայված հիմնական հովանավոր կազմակերպությունների գրասենյակները փակվեցին կամ վերածվեցին տեղական հասարակական կազմակերպությունների (ՀԿ), որոնք այսօր իրենք էլ են դրամաշնորհների դիմում՝ գոյությունը պահպանելու համար: Այս հարցը քննարկելիս «Քաղաքացիական հասարակության ներկա վիճակը, զարգացման հեռանկարները» խորհրդածողովի<sup>9</sup> մասնակիցներն էլ էին նշում, որ ՀԿ-ների ֆինանսական կայունության երաշխիքը եկամտաբեր գործունեությունն է, որի համար հարկավոր է բարենպաստ պայմաններ ստեղծել օրենսդրական փոփոխությունների միջոցով:

Մարդկային ռեսուրսների զարգացման առումով կարելի է նշել ՄԱԿ-ի համայնքային զարգացման աջակցության ծրագիրը: Դրանով նախատեսված էր համայնքային կազմակերպությունների հետ սեմինարների, դասընթացների, կլոր սեղանների և ուսումնական ծրագրերի շարքի կազմակերպում՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի և զարգացման այլ ռազմավարությունների ու ծրագրերի իրագործման նկատմամբ մշտադիտարկման կարողությունները զարգացնելու նպատակով<sup>10</sup>:

<sup>9</sup> [http://www.auna.am/index.php?option=com\\_content&view=article&id=59](http://www.auna.am/index.php?option=com_content&view=article&id=59)

<sup>10</sup> <http://www.undp.am/?page=UNJointStrategy> (ՅՕ. 14.12.2012)


3. Կառուցվածքային ավելի բարձր զարգացում ունեցող կազմակերպություններում ավելի շատ են ակտիվ շահառուները և կամավորները, հետևաբար ավելի բարձր է նաև նրանց գործունեության պահանջարկը համայնքում: Այն համայնքային կազմակերպությունները, որոնք ձգտում են ընդլայնել իրենց ներգրավվածությունը համայնքային խնդիրների լուծման մեջ, հետևողականորեն պլանավորում և իրականացնում են իրենց կառուցվածքային զարգացման գործընթացը:

4. Համայնքային կազմակերպությունների կարևորագույն խրնդիրներից է հաղորդակցային գործընթացի մշակույթի ձևավորումը: Այն հատկապես օգտակար է տեղական ինքնակառավարման մարմինների հետ գործնական համագործակցության հաստատման գործում:

5. Սկսնակ կազմակերպությունների համար նախատեսված համայնքային զարգացման ուսուցման ծրագրերը և գրականությունն այլևս չեն բավարարում բնագավառում գործող կազմակերպությունների պահանջները. հարկավոր է ավելի խոր և բազմակողմանի ուսուցման ծրագրեր մշակել ու համապատասխան գրականություն ստեղծել:

6. Հայաստանում ՀԿ-ների զարգացման համար իրավական դաշտի անբարենպաստության հարցը շատ է քննարկվել, սակայն քրննարկումներին որոշակի գործողություններ չեն հետևել: 1999 թ. ընդունված ՀՀ հասարակական կազմակերպությունների մասին օրենքի 2001, 2005 և 2007 թթ. լրացումներից հետո էական բարելավումներ չեն արձանագրվել: Հետևյալ գծապատկերը, օրինակ, ցույց է տալիս Հայաստանի և Լատվիայի ՀԿ-ների զարգացման իրավական դաշտի բարենպաստության գնահատականը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ՀԿ-ների սեկտորի կայունության գնահատման ամենամյա հաշվետվությունից<sup>11</sup>:

Պատկեր 1. Հայաստանի և Լատվիայի ՀԿ-ների զարգացման իրավական դաշտի ԱՄՆ ՄԶԳ-ի գնահատականը



Ըստ ամերիկյան փորձագետների՝ Լատվիայում իրավական միջավայրի արագ բարելավման պատճառն այդ երկրի քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածությունն է օրենսդրական բարեփոխումների գործընթացում:

<sup>11</sup> [http://transition.usaid.gov/locations/europe\\_eurasia/dem\\_gov/ngoindex](http://transition.usaid.gov/locations/europe_eurasia/dem_gov/ngoindex) (այց. 14.XII.2012)

7. Համայնքային կազմակերպությունների զարգացմանը կնպաստեր նաև անվճար մասնագիտական իրավաբանական խորհրդատվական ծառայության առկայությունը:

8. Համայնքային կազմակերպությունների անդամների կարծիքով, դիրքային գործոնի հետ զգալի բարդություններ են կապված և՛ կազմակերպական, և՛ սուբյեկտիվ տեսակետից: Վարչական կառույցները համայնքային կազմակերպությունների հետ համագործակցության նախաձեռնություններ չեն ցուցաբերում, և նրանց փոխադարձ վստահությունը քիչ է: Տեղական իշխանությունների հետ գործնական համագործակցության հաստատման հարցում համայնքային կազմակերպությունները պետք է հանդես գան նախաձեռնողի դերում:

9. Տեղական իշխանությունների հետ համագործակցության և հաղորդակցության գիտելիքներ և հմտություններ հնարավոր է ձեռք բերել համատեղ ուսուցման ծրագրերի միջոցով:

10. Համայնքային կազմակերպությունների դաշտում զարգացման միտումների մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար հարկավոր է պարբերաբար համապատասխան հետազոտություններ իրականացնել: Հաշվի առնելով համայնքային զարգացման տեղական առանձնահատկությունները՝ երկրում տեղի ունեցող երևույթի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար պետք է ընդլայնել ուսումնասիրության աշխարհագրությունը և կազմակերպել քննարկումներ և փորձի փոխանակում:

## РОЛЬ ОБЩИНСКИХ ОРГАНИЗАЦИЙ В РАЗВИТИИ ОБЩИН

КАЖОЯН Р. А.

Резюме

Общинные организации играют важную роль в развитии общин. Они занимаются вопросами здравоохранения и охраны окружающей среды, проблемой снижения безработицы, управлением и привлечением ресурсов. Теоретические и эмпирические исследования, проводимые как в обществах с развитыми традициями демократии, так и в странах развивающейся демократии, выявили факторы, влияющие на формирование общин и на развитие самих общинных организаций. Это – инициативная роль и институциональный уровень общинных организаций, их политическая культура и соответствующие знания и опыт их сотрудников. Эти внутренние и внешние – правовые и позиционные факторы, возможно, влияют также и на развитие общин в Армении. Практика показала, что оказывая благоприятное воздействие на внутренние факторы и создавая соответствующие условия путем стимуляции внешних факторов, можно ускорить процессы общинного развития.